«ՄՈՒՐՃ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

Ներկայ 10-րդ №-ով մենք ուղարկում ենք մեր բոլոր բաժանորդներին «Մուրճ»-ի բոլոր 10 համարների բովանդակութիւնը հինգ-հինգ հատ ամեն մէկին։ Նոցանից մէկը նշանակած է բաժանորդի մօտ մնալու, իսկ մնացած չորսը ոչ-բաժանորդներին բաժանելու համար։ Դորա համար հարկաւոր է, որ մեր այժմեան բաժանորդները մի լայտնի նեղութիւն կրեն։ Մենք խնդրում ենք մեր բաժանորդներին չը զլանալ այդ նեղութիւնը իրանց վերայ առնել։ «Մուրճ»-ի անցած համարների բովանդակութեան հետ մեր ոչ-բաժանորդներին ծանօթացնելը մենք համարում ենք միակ իրօք վայել միջոցը՝ նոցա մէջ պրօպագանդ անել լօգուտ «Մուրճ»-ի դալ 1890 թուականի բաժանորդագրութեան։ Այդ նաև միակ լաւ միջոցն է «Մուրճ»-ի ներկայ բաժանորդների լիշողութեան մէջ միշտ վառ պահել «Մուրճ»-ի անցեալ գործունէութիւնը։ Այն ամենքը, որոնք «Մուրճ»-ի ներկայ տարեայ ցոյց տուած գործունէութիւնը բաւականաչափ մեծ գրական են համարում մեր հասարակ կամքի՝ «Մուրճ»-ը պահպանել մի ամսագրին վայել բարձրութեան վերայ. այն ամենքը, որոնց մենք, մեր ցայժմեան գործունէութիւնով, կարողացել ենք ներշնչել հաւատ դէպի «Մուրճ»-ի ապագան. այն ամենքը, վերջապէս, որոնք ուրախ են «Մուրճ»-ի գոյութեան համար և նորա մէջ տեսնում են կարևոր գործիչ մեր գրական կեանքի—նոքա ուրախութեամբ պիտի լանձն առնեն «Մուրճ»-ի բաժանորդագրութեան համար աշխատել։ «Մուրճ»-ի գոյութիւնը պէտք է պահպանի միայն և միմիայն բաժանորդներով։ Շատ բաժանորդներ ունենալը կախուած է նաև այն օգնութիւնից, որ հրատարակութեան համակրողները տրամադիր են անելու խմբագրութեան։ «Մուրճ»-ի ընթերցողների թիւը շատ մեծ է, անհամեմատ աւելի մեծ, քան նա բաժանորդներ ունի։ Հարկաւոր է, որ այդ ոչ-բաժանորդ ընթերցողները չը զլանան իսկական բաժանորդ գրուելու։ «Մուրճ»-ի

բաժանորդագրութեան աջողութիւնից կախւած է թէ նորանոր բաժիններ բացելը և թէ ամսագրի ծաւալի ընդարձակելը։ Միացնելով մեր այժմեան բաժանորդների թւի հետ նոցա, որոնք «Մուրճ»-ի միայն ընթերցողներ են, մենք կը ստանանք բաժանորդների այն թիւը, որով մենք աւելի ևս մեծ աջողութեամբ կը հետևենք մեր առաջադրած նպատակին։ Այդ միջոցների ձեռք բերելը կախւած է մասամբ «Մուրճ»-ի գնահատողների ջանքերից, և մենք չենք կասկածում, որ դոքա իրանց այդ ջանքերը չեն խնայիլ։ Օգուտը—մեր գրականութեանն է, օգուտը—մեր ազգինն է։

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ ներկայ 10-րդ համարում ամբողջապէս նւիրւած է օտար գրականութեան։ Զբաղւել միայն հայկական գրականութիւնով և հաշիւ տալ միայն ընթացիկ հայկական գրքերի,—այդ կը նշանակէր չափազանց նեղ հասկացողութիւն ունենալ հայ ինտելիգենտ ընթերցողների մտաւոր պահանջների մասին։ Հարկաւոր է, որ հայ ընթերցողի աչքի առջև մի պատուհան բացւէր, որտեղից նա կարողանար իւր տեսողութիւնը տարածել նաև օտար, մեզնից շատ և շատ աւելի լուսաւոր և առաջադէմ ազգերի մտքի և ոգու արդիւնքների վերայ։ «Մուրճ»-ը, ներկայ համարով, փորձում է մի այդպիսի պատուհան բանալ հայ ընթերցող հասարակութեան աչքի առջև։ Բոլոր խնդիրը նորանումն է, թէ «Մուրճ»-ը ի՞նչ գրքերի պէտք է զերազատութիւն տայ գրախօսութեան համար, որովհետև օտար լեզուներով լոյս տեսնող գրքերի, նոյն իսկ նշանաւոր գրքերի, թիւը ահագին է։

Պատասխանը գրեթէ տւած է։—«Մուրճ»-ը կը տայ տեղեկութիւններ օտար գրականութիւնից միմիայն այնպիսի գրքերի մասին, որոնք շատ թէ քիչ ընդհանուր հետաքրքրութիւն են ներկայացնում։ Այդպիսի գրքեր կարող են վերաբերւել զանազան մասնագիտութիւնների՝ և՛ գեղեցիկ գրականութեան և՛ բանաստեղծութեան և՛ կրօնագիտութեան և՛ բնական գիտութիւնների և՛ պատմութեան և՛ իրաւաբանութեան և՛ քաղաքատնտեսութեան և քաղաքականութեան և այլն։

Օտար լեզուներով լոյս տեսնող գրքերի վերաբերեալ գրախօսութիւնից «Մուրճ»-ի ընթերցողները կը ծանօթանան, թէ ի՞նչ նիւթերի վերայ են ուշադրութիւն դարձնում լուսաւոր երկիրներում, կ՚իմանան թէ մի որոշ խնդրի ի՞նչ կողմերով են հետաքրքրւում առաջադէմ ազգերը, կ՚ընտրեանան այն մեթոդների հետ, թէ ի՞նչպէս են ուսումնասիրւում խնդիրները և այն և այն։ Այդ անմիջական արդիւնքով մենք օգնած կը լինենք

«Մուրճ»-ի նպատակներից մէկի հասնելուն, այն է՝ ընդարձակել հայ հասարակութեան մտաւոր հորիզոնը առհասարակ։

Ասելով՝ թէ ահագին քանակութեամբ լոյս տեսնող օտար գրքերից մենք պէտք է ընտրենք, գրախօսութեան համար, միայն նոցա, որոնք ընդհանուր հետաքրքրութիւն են ներկայացնում, մենք հեռու ենք կարծելուց, թէ նոյն իսկ միայն այդ տեսակ գրքերի նկատմամբ, «Մուրճ»-ը կարող է լիակատար կերպով ընթերցողներին բաւարարութիւն տալ։ Այդ հաւակնութիւնը առ այժմ մենք չ'ունինք, բայց միայն կարող ենք խոստանալ, որ կ'աշխատենք, որքան միայն հնարաւոր է, այդ կատարելութեանը հասնել։

Բայց ահա նաև մի երկրորդ խնդիր. ի՞նչ միջոցներ կարող է ունենալ մի հայկական հրատարակութիւն—այդքան բազմաթիւ և բազմազան գրքերի մասին գրախօսական լօղւածներ տալու։ Չէ թէ հայ հասարակութեան՝ նորա ամենաուսումնական մասի մէջ անդամ՝ չը կայ գրողների այն կոնտինգենտը, որը խմբագրութեանը մատակարարէր այդքան լօղւածներ՝ կոմպիտենտ ձեռքով գրած։ Իսկ միւս կողմից խմբագրութիւնն էլ չի կարող այդքան գրքեր ձեռք բերել։ Ուրեմն ի՞նչ միջոցով խմբագրութիւնը պէտք է և կարող է իւր խոստումը կատարել։

Պատասխանը հեշտ է դուշակել. քանի որ մեր ուժը չի պատում մեր սեպհական միջոցներով այդ օտար գրքերը ստանալ և լատուկ գրախօսների ձեռքով նոցա մասին քննադատական նկատողութիւններ տալ, բնական է և խելացի՝ օգտուել լայնի հրատարակութիւններից, դէպի որոնք «Մուրճ»-ի խմբագրութիւնը տածում է լիակատար հաւատ։ Այդ հանգամանքում ես մենք մեր անկախութիւնը ձեռքից բաց չենք թողնում և չենք պարտաւորւում մեզ նիւթ ծառայող գրախօսութիւնները բառ առ բառ թարգմանել. մենք միմիայն օգուտ կը քաղենք, ծառայեցնելով նոցա որպէս նիւթ։

Այս բոլորը ասելուց յետոյ, մենք դիմում ենք մեր համալսարանական բարեկամներին, թէ Ռուսաստանի և թէ Արտասահմանի, օգնել մեզ այդ գործում, ուղարկելով մեզ գրախօսական լօղւածներ՝ թէ բոլորովին անկախ կերպով կազմած և թէ օգտուելով իրանց մատչելի հրատարակութիւններից։

Ասելն անդամ աւելորդ է, որ օտար գրքերի մասին գրախօսութիւնը ոչ մի կերպով չը պիտի կատարւի ի հաշիւ հայկական գրքերի, որոնց մասին հաշիւ տալը մեր այդ բաժնի առաջին նպատակն է։

ՎՐԻՊԱԿ

«Մուրճ»-ի անցեալ 9-րդ Ն-ում, Ներքին տեսութեան մէջ, երես 1470, պէտք է կարդալ «գեներալ Աննենկովը, չինելով Անդրբկասպեան երկաթուղին», մինչդեռ սխալմամբ տպված է «գեներալ Աննենկովը, չինելով Անդրկովկասեան երկաթուղին»։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ